

տրաստուած ըլլալով, ամբողջովին հիմնուած է վաւերացողութեամբ վրայ, որով կը հանդիսանայ հայկական աշուի տրաստին ճշմարտացոյց յուշարձանը: Սկզբը զետեղուած է կէս մեղրէ աւելի հրկայնութիւն ունեցող՝ Հայաստանի քարտէս մը: Տպուած է այս գիրքը - London, Sir Joseph Causton and Sons. Limited, J. Eascheap.-Գինն է 2 շիլինկ: Թանձնարարելի է ծաւալել զայն անգլիախոս ազգերուն մէջ:

JAMES BRYCE

Դեռ-Կոնս Պրայս իւր այս հրատարակութեամբը՝ անգամ մ'ես կը հաւատէ ըլլալ կլատտոնի ոգոյն բարձրութեամբ՝ հարստահարեալ ժողովուրդի մը անձնուէր բարեկամը: Մեր տառապեալ ազգը յաւիտեալ երախտագիտութեան խորին յարգանք պիտի տածէ մեծ Սկոտլանդիին հանդէպ, որ անդադար ամենայն ճիշդով կ'աշխատի՝ լաւագոյն կեանքի պայմաններու մէջ մտցընել տալ բովանդակ Հայութիւնը:

James Bryce Սկոտլանդի կլատտոն քաղաքը ծնած է 1838ին, 1880ին Անգլիական խորհրդարանը մտած է: Ապա կլատտոնի նախարարութեան ատեն՝ Արտաքին գործոց նախարարի օգնական էր, յետոյ զաւրիին մէջ, Լանքասթրի Դքսութեան Պաշտօնակալը եղած է: 1894ին նախագահ եղած է Անգլիոյ Առեւտրական պաշտօնարանին և Արքունի յանձնաժողովին Բարձրագոյն Կրթութեան: Ապա իսկ

լանտայի նախարար և անկէ վերջ Լա Հէյի Իրաւարարական դատարանի Անգլիական պատուիրակութեան անդամներէն մին եղած է: 1907էն 1912 Միացեալ Նահանգաց մէջ Բրիտանական դեսպան ըլլալով, մեզի յղած է իւր դիմագրծը, և ի նշան գնահատումի և համակրութեան զանազան անգամ պատուած զմեզ՝ այցելելով ի Ս. Ղազար:

Այսպիսի բարձր անձնավորութեան ծառայութիւնները մեծապէս գնահատելով Մեծ Բրիտանիոյ արդի Գէորգ Թագաւորը, զայն 1914ին Դեռ-Կոնս անուանած է և «Լորտ» հռչակած, որով և եղած է Լորտերու ժողովին անդամ:

Ճէյմս Պրայսի զանազան հեղինակութիւններու մէջէն մեր ազգին համար թանկագին գոհար մ'է Transcaucasia and Ararat, որ 1877ին այցելելով Հայաստան և ելլելով Մասիսի զագալը, անոր բարձունքէն դիտած է Հայկական աւերակները, ըմբռնած է հայ անցեալ քաղաքակրթութեան բարձրութիւնը, թափանցած է հայ ցեղին բարեմասնութեանց մէջ, և արգահատելով մեզի, նուիրած է ինքզինքը, մեր Պատմութեան, մեր Եկեղեցւոյն և մեր ժողովուրդին ուսումնասիրութեանը: Օգնութեան աջը անդադար կարկառած է մեր ցեղին՝ որուն անբաժան բարեկալմը ըլլալը բանիւ և գործով և հրապարակագործութիւններով միշտ ապացուցած է, իր ձեռներէցութեամբ հիմնուած է «Անգլո-Հայկական ընկերակցութիւնը» ի Լոնտոն, որ 1894ին մեծապէս օգտակար եղաւ և որ զեռ կը շարունակուի:

ԽՄԲ.

ARMENIA

Երրորդ տարին է որ կը հրատարակուի, տեղուն և յամառ յարատեւութեամբ, հայ ազգասէր երիտասարդներէ, իրենց նպատակը գովելի է և վստմ. Ժողովարանը մեր թշուառ բայց դիպչազն ազգին կրածները, տառապանքները... Զոն կը գտնուին՝ ոչ միայն ազգայուրիք, այլ նոյն իսկ մեր համբաւաւոր գրողներու՝ ընտիր թարգմանութիւններ. որով լուրի կերպով կը շանան հանրածախ իմք ընել մեր ազգին տաղանդն ալ: Թերթին լեզուն իտալերէն է. պատկերազարդ, գեղեցիկ տպագրութիւն: Տարեկան գինն է Փր. 5. գիմն:

« Armenia » Corso Regina Margherita 73, TORINO (Italia)